2021, № 3, 19-30 *Միջազգային հարաբերություններ*
https://doi.org/10.46991/BYSU:D/2021.12.3.019

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԹՈՒՐՔԻԱՅԻ ԱՐՏԱՔԻՆ ԵՎ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՌԱԶՄԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ

ԼԵՎՈՆ ՀՈՎՍԵՓՅԱՆ, ԱՐՄԵՆ ՊԵՏՐՈՍՅԱՆ

Թուրքիայի արտաքին և տարածաշրջանային արդի քաղաքականությունը բնութագրվում է որպես ռազմականացված և գերանվտանգայնացված, որն ուղեկցվում է ազգայնական ու ծավալապաշտական հռետորաբանությամբ, իր հարևան տարածաշրջաններում ստատուս քվոյի վերանայմանը միտված ագրեսիվ նախաձեռնողականությամբ: Հոդվածում դիտարկվում և վերլուծվում են Թուրքիայի տարածաշրջանային արդի քաղաքականության մեջ ռազմական ներուժի կիրառման, հարևան երկրներում և տարածաշրջաններում ռազմական միջամտությունների ու պրոքսի պատերազմի վրա հիմնված ռազմավարությունը, արտաքին ու տարածաշրջանային քաղաքականության ռազմականացման ու անվտանգայնացման վերաբերյալ տեսական մոտեցումները, այդ ռազմատենչ քաղաքականության վրա ազդող ներքին և արտաքին գործոնների նշանակությունը:

Բանալի բառեր – *Թուրքիա, ԱԶԿ, արտաքին քաղաքականություն, տարածաշրջանային հակամարտություն, ռազմականացում, անվտանգայնացում, ռևիզիոնիզմ*

Էրդողանական արտաքին քաղաքականությունը. անվտանգայնացում, ռազմականացում, ռևիզիոնիզմ

Թուրքիայի արտաքին ու տարածաշրջանային արդի քաղաքականությունը բնութագրվում է որպես ռազմականացված և անվտանգայնացված, որն ուղեկցվում է ազգայնական ու ծավալապաշտական հռետորաբանությամբ, իր հարևան տարածաշրջաններում ստատուս քվոյի վերանայմանը միտված ագրեսիվ նախաձեռնողականությամբ: Թուրքիայի արտաքին քաղաքականության վերաբերյալ արդի գիտական գրականության մեջ արտաքին ու տարածաշրջանային նման վարքագիծը բացատրվում է տարբեր գործոնների ու փոփոխականների և դրանց համախմբի միջոցով: Ոլորտի մասնագետ որոշ հեղինակներ փորձում են Թուրքիայի արտաքին քաղաքականության կերպափոխումները բացատրել առավելապես միջազգային համակարգի կառուցվածքի, գլոբալ մակարդակում ուժային հավասարակշռության վերադասավորումների ու գործընթացների տեսանկյունից՝ փաստելով, որ միջազգային համակարգի կառուցվածքն ու գործընթացները որոշիչ դեր ունեն և ստիպում կամ հնարավորություն են

ստեղծում Թուրքիայի համար մարտավարական ու ռազմավարական հարթության մեջ ադապտացիոն մեխանիզմներ գտնելու և ըստ այդմ համապատասխան վարքագիծ դրսևորելու: Թ. Օղուզլուն, չթերագնահատելով ներպետական ու անձնային գործոնների կարևորությունը, Թուրքիայի արտաքին քաղաքականության կերպափոխումների հարցում առանցքային է համարում միջազգային կառուցվածքի ազդեցությունը՝ նշելով, որ արտաքին քաղաքականության ընտրանքները փոփոխվում են միջազգային ու տարածաշրջանային մակարդակներում բևեռայնության դինամիկային զուգահեռ: Ըստ նրա՝ աշխարհակարգի բազմաբևեռայնացումը 2015 թ.-ից սկսած, Թուրքիայի արտաքին քաղաքականությունը վերադարձրել է «ռեալիզմի գիրկը»՝ առանցքային դարձնելով «ռազմավարական ինքնավարության» ձգտումը[1]: Հետազոտողների մյուս մասը Թուրքիայի արտաքին քաղաքականության կերպափոխումները բացատրում է առավելապես ներպետական/միավորային և անձնական գործոնների կարևորությամբ՝ ընդգծելով ինքնության, գաղափարախոսության ու էլիտաների/լիդերների ընկալումների դերը: Ա. Քալիբերը և Է. Քալիբերը Թուրքիայի արտաքին քաղաքականության միտումները գնահատում են ներպետական գործոնների՝ էլիտայի պոպուլիզմի ու ինքնության փոխակերպումների դիրքերից: Ըստ նրանց՝ Թուրքիայում ուժգնացող հակաարևմտականությունը և արտաքին ու ներքին քաղաքականության «ապաեվրոպականացումը» պայմանավորված են երկրի ներսում տեղի ունեցող գործընթացներով, էլիտայի ընկալումներով ու ինքնությամբ[2]:

Պոպուլիստական ուժերն ու լիդերները, ինչպես օրինակ՝ «Արդարություն և զարգացում» կուսակցության (այսուհետ՝ ԱԶԿ) ու Ռեջեփ Թայիփ Էրդողանի պարագայում որպես կանոն վարում են այնպիսի արտաքին քաղաքականություն, որն արտացոլում է նրանց ներքին ինքնությունը, նախապատվություններն ու արժեքները[3]: Օ. Թաշփընարը Թուրքիայի արտաքին քաղաքականության ռազմավարական տեսլականներն ու պարադիգմները դիտարկում է երկրում գաղափարախոսական/արժեհամակարգային կողմնորոշիչների տեսանկյունից՝ նշելով, որ քեմալիզմը, նեոօսմանականությունը և գոլիզմը[4] արտաքին քաղաքականության երեք հիմնական ռազմավարական մրցակցող տեսլականներն են, այսինքն՝ արտաքին քաղաքականությունը սահմանվում և ուղղորդվում է գաղափարախոսական գերակայությունների ազդեցության ներքո[5]: Հեղինակների մյուս խումբը Թուրքիայի արտաքին քաղաքականության միտումները

---

[1] Տե՛ս **Tarık Oguzlu**, Turkish Foreign Policy in a Changing World Order, All Azimuth V.9, N.1, 2018, էջ 127-136:

[2] Տե՛ս **Alper Kaliber & Esra Kaliber**, From De-Europeanisation to Anti- Western Populism: Turkish Foreign Policy in Flux, The International Spectator, Vol. 54, Issue 4, էջ 1-16:

[3] Տե՛ս նույն տեղը:

[4] Տե՛ս **Ömer Taşpinar**, The Rise of Turkish Gaullism: Getting Turkish-American Relations Right, Insight Turkey, Vol. 13, № 1, 2011, էջ 11-17:

[5] Տե՛ս **Ömer Taşpınar**, The Three Strategic Visions of Turkey, https://www.brookings.edu/research/the-three-strategic-visions-of-turkey/

բացատրում է հավասարապես և՛ միջազգային համակարգի կառուցվածքի, և՛ ներպետական գործոնների ազդեցությամբ: Շ. Քարդաշը Թուրքիայի տարածաշրջանային քաղաքականության ռազմականացումն ու վերաանվտանգայնացման վրա հիմնված ռևիզիոնիզմը բացատրում է տարածաշրջանային ու ներպետական գործոնների (փոփոխականների) համադրության նորդասական ռեալիզմի հիման վրա՝ կարևորելով ներքին/ներպետական ոլորտի վերաանվտանգայնացման դերն արտաքին քաղաքականության մեջ: Անվտանգայնացված արտաքին քաղաքականությունն սկսեց հիմնվել տարածաշրջանում ռազմական ուժի կիրառման և ոչ կոնվենցիոնալ դաշնակիցների հետ անվտանգային համագործակցության մոտեցման վրա: Ռազմական ուժի հաճախակի կիրառումը դարձավ Մերձավոր Արևելքում Թուրքիայի քաղաքականության հիմնական առանձնահատկությունը[6]: Լ. Հոգոմը, Թուրքիայի արդի արտաքին քաղաքականությունը բնութագրելով որպես ազգայնական, անկախական, ինքնավստահ ու հանդուգն, արտաքին քաղաքականության կերպափոխումների շարժիչ գործոնների թվում կարևորում է ինչպես տարածաշրջանային ու ներքին անվտանգության բաղադրիչները, այնպես էլ ներպետական, ներքաղաքական անձնային գործոնները, էլիտայի ու առաջնորդի ինքնությունը[7]: Որոշ հեղինակներ Թուրքիայի արտաքին քաղաքականությունն առավելապես պայմանավորում են ներպետական գործոններով՝ նշելով, որ արտաքին քաղաքականությունը ծառայեցվում է ներքաղաքական ու ներպետական խնդիրներին: Օրինակ՝ Օզփեքը և Յաշարն արտաքին քաղաքականության մեջ օսմանականության ու իսլամականության օգտագործումը բացատրում են երկրում իշխանության ամրապնդման ու հարատևման պոպուլիստական մղումների տեսանկյունից: Այսինքն՝ դա իր իշխանությունն ամրապնդելու միջոց է ԱԶԿ-ի համար[8]: Տ. Ալարանտան[9] և Շ. Օվալը[10] կարևորում են արտաքին քաղաքականության առաջնահերթությունների ու նախապատվությունների հարցում ինքնության ու գաղափարախոսության դերը: Ըստ Օվալի՝ 2011 թ. սկսած՝ ԱԶԿ-ի կերպափոխումն իսլամական ազգայնականության ոչ միայն հանգեցրեց երկրի ինտենսիվ իսլամականացման, այլև արտաքին քաղաքականության ինքնության, գաղափարական համատեքստ դրա ներթափանցման, որում ձևավորվում էին Անկարայի անվտանգության

---

[6] Տե՛ս **Şaban Kardaş**, Revisionism and Resecuritization of Turkey's MiddleEast Policy: A Neoclassical Realist Explanation, Journal of Balkan and Near Eastern Studies, Vol. 23, № 3, 2021, էջ 490-501:

[7] Տե՛ս **Lars Haugom**, Turkish foreign policy under Erdogan: A change in international orientation?, Comparative Strategy, Vol. 38, Issue 3, 2019, էջ 206-223:

[8] Տե՛ս **Burak Bilgehan Özpek & Nebahat Tanriverdi Yaşar**, Populism and foreign policy in Turkey under the AKP rule, Turkish Studies, Vol. 19, № 2, 2018, էջ 212:

[9] Տե՛ս **Toni Alaranta**, National and State Identity in Turkey: The Transformation of the Republic's Status in the International System, Rowman & Littlefield, London, 2015, էջ 100:

[10] Տե՛ս **Şevket Ovalı, İlkim Özdikmenli**, Ideologies and the Western Question in Turkish Foreign Policy: A Neo-classical Realist Perspective, All Azimuth, Vol. 9, № 1, 2020, էջ 120:

ընկալումներն ու դրանց արձագանքները[11]: Որոշ հեղինակներ Թուրքիայի արտաքին ու տարածաշրջանային քաղաքականության բացատրությունը տեսնում են առավելապես իսլամական ինքնության մեջ: Բ. Բաշքանը Մերձավոր Արևելքում Թուրքիայի ակտիվությունը պայմանավորում է ԱԶԿ-ի իսլամական ինքնությամբ, երբ տարածաշրջանում ստատուս քվոն փոխելու համար Թուրքիան իրեն դաշնակիցներ ընտրեց Սաուդյան Արաբիային և Կատարին՝ որպես պետական, իսկ «Մուսուլման եղբայրներին»՝ որպես ոչ պետական դերակատարների[12]:

Ինչպես ցույց տվեցին հետագա զարգացումները, Թուրքիայի արտաքին քաղաքականությունը դարձավ հակամարտածին ու սպառնալից, երբ ԱԶԿ-ն գերակայություն հաստատեց արտաքին քաղաքականության որոշումների կայացման մեխանիզմում[13]՝ անձնակենտրոն ավտորիտար կառավարման հաստատմամբ կազմաքանդելով հակակշիռների ու փոխզսպման ներպետական համակարգը:

ԱԶԿ-ական ռևիզիոնիզմը կարող ենք սահմանել որպես նախկին ստատուս քվոյի ավանդական արտաքին քաղաքականության մերժում, միջազգային ու տարածաշրջանային կարգի վերափոխմանը միտված քաղաքականություն, որը կհամապատասխանի Թուրքիայի վերաձևակերպված ազգային շահերին ու տեսլականին, տարածաշրջանային հեգեմոնիայի ձգտումներին ու հավակնություններին: Այս համատեքստում ռևիզիոնիզմն ունի նաև ներքին բաղադրիչ՝ վերափոխել պետության ինքնությունն ու նախկին դոմինանտ գաղափարախոսությունը, պետական կառուցակարգն ու ներպետական հավասարակշռության համակարգը: Ներքին և արտաքին բաղադրիչները խիստ փոխկապակցված են, և մեկը պայմանավորում է մյուսի «լեգիտիմությունն ու հաջողությունը»: Երկրում քեմալական արժեհամակարգի ու գաղափարախոսության կազմաքանդումը, պետական համակարգում դրա կրողների թուլացումն ու չեզոքացումը, իսլամական ինքնության ու գաղափարախոսության համընդհանուր արմատավորումն ԱԶԿ-ի ռևիզիոնիստական արտաքին ու տարածաշրջանային քաղաքականությունը սնուցող ու ներազդող գործոններ են: Հատկապես «Արաբական գարնան» ու սիրիական ճգնաժամի համատեքստում Թուրքիայի կողմից տարբեր երկրներին «փափուկ ուժի» ու հարկադրանքի գործիքներով սեփական շահերին համահունչ վարքագծի և խաղի կանոնների պարտադրումը՝ որպես սեփական հզորության ու առաջնորդության դրսևորում, կարող ենք դիտարկել ռևիզիոնիստական քաղաքականություն:

2016 թ. Թուրքիայի քաղաքական-անվտանգային դիսկուրսում փոխկապակցված ձևով օրակարգ բերվեց բանալի բառերի նշանակություն

---

[11] Տե՛ս նույն տեղը:

[12] Տե՛ս **Birol Başkan**, Islamism and Turkey's foreign policy during the Arab Spring, Turkish Studies, Vol. 19, Issue 2, 2018:

[13] Տե՛ս **Burak Bilgehan Özpek & Nebahat Tanriverdi Yaşar**, նշվ. աշխ., էջ 208-209:

ունեցող մի քանի հասկացություն՝ «Ազգային ուխտ-Լոզան-1923 թ.», որոնք ի ցույց են դնում Էրդողանի անվտանգային պատկերացումները Թուրքիայի տեղի ու դերի մասին: Պաշտոնական, քաղաքական ու վերլուծական դիսկուրսի կարևոր թեմաներից մեկը «Ազգային ուխտի» վերաարժևորման խնդիրը դարձավ, ինչն ուղղակիորեն Էրդողանի կողմից կրկին բերվեց օրակարգ: Դրան զուգահեռ՝ նա արեց Լոզանի պայմանագրի վերանայման հարցադրումը, որը ևս պատահական չէ: Էրդողանը հայտարարեց, որ Թուրքիայի արևմտյան և հարավային սահմաններում «Ազգային ուխտով» հռչակված նպատակները ցավալիորեն չեն իրագործվել, 20 մլն քառակուսի կմ-ից Թուրքիայի տարածքը կրճատվել է 780 հզ-ի, և 2016 թ. չեն առաջնորդվելու 1923 թ. հոգեբանությամբ[14]:

Թուրքիայի ներկայիս իշխանությունների ռազմատենչ գործողություններն ու արտաքին քաղաքականության մեջ ռազմական բաղադրիչի գործիքայնացումը հաճախ մեկնաբանվում են ներքաղաքական գործընթացների տեսանկյունից, որ կառավարող էլիտան ներքին ճգնաժամերը հաղթահարելու և իր քաղաքական ուժի համախմբումն ապահովելու համար դիմում է արտաքին քաղաքականության օգնությանը: Ս. Գյուվենչն այս համատեքստում նշում է. *«Էրդողանը հասկացավ, որ ներքին ու արտաքին քաղաքականության մեջ զինված ուժերը գործառական են: Երբ առկա է ներքին քաղաքական ճգնաժամ, Թուրքիայի սահմաններից դուրս ռազմական գործողությունները դառնում են օգտակար: Թվում է՝ ամեն նման գործողություն գրգռում է Էրդողանի ախորժակը»*[15]: Նման պնդումը համարելով ընդունելի՝ հավելենք, որ Թուրքիայի համար արտաքին վտանգն ու թշնամու կերպարը կամ դրա ստեղծումը ավանդաբար ծառայել են որպես հասարակական-քաղաքական համախմբվածություն ապահովելու արդյունավետ միջոց: Սակայն էրդողանական Թուրքիայի արտաքին ու տարածաշրջանային ռազմատենչ գործողությունների բացատրությունը միայն ներքին քաղաքական շահերով կամ այդ ուժի դիրքերի ամրապնդման տեսանկյունից ամբողջությամբ չի արտացոլում այն հավակնություններն ու նախապատվությունները, որոնց իրականացումն այսօր ընթացքի մեջ է: Չենք կարծում, որ Սիրիայում իրականացված ռիսկային ռազմագործողությունները, ռուսական «Սու-24» ինքնաթիռի խոցումը, ռազմատեխնիկական ներուժի աննախադեպ աճը, տարածաշրջանում ռազմական բազաների հիմնումն ու ներկայության մեծացումն առավելապես ներքաղաքական հաշվարկների տիրույթում են: Դրանք կոչված են սպասարկելու էրդողանական «Նոր Թուրքիայի» (*Yeni Türkiye*) աշխարհաքաղաքական հավակնություններին ու որդեգրած ռևիզիոնիստական արտաքին քաղաքականությանը:

Թուրքիայի ներպետական, ներքաղաքական գործընթացների անվ-

---

[14] Տե՛ս Cumhurbaşkanı Erdoğan'dan 'Misak-ı Milli' mesajı, http://www.hurriyet.com.tr/gundem/cumhurbaskani-erdogandan-misak-i-milli-mesaji-40252990.

[15] **Pinar Tremblay**, Desperate times bring out Erdogan in camouflage, https://www.al-monitor.com/pulse/originals/2019/11/turkey-desperate-times-brings-out-erdogan-in-camouflage.html:

տանգայնացմանը զուգահեռ՝ արտաքին քաղաքականության անվտանգայնացման ու ռազմականացման գործում առանցքային նշանակություն ունի ռազմական կարողությունների մեծացումը, որը կառավարող էլիտային տարածաշրջանային ու արտաքին քաղաքականության հարցում գերինքնավստահության մեծ աստիճան էր ապահովում: Էրդողանի հավակնոտ ու ագրեսիվ արտաքին քաղաքականության գործում գերինքնավստահությունն էականորեն պայմանավորված էր նաև տեղական ռազմարդյունաբերության զարգացմամբ, ինչի շնորհիվ իշխանությունները գործելու ինքնավարություն ու համարձակություն էին ստանում: Տեղական ռազմարդյունաբերության արագ զարգացումը կամ այլ կերպ ասած՝ ռազմական արդյունաբերության «թուրքացումը» (Türkleşme)[16], բանակի ռազմատեխնիկական կարիքների ապահովման հարցում տեղական մասնաբաժնի մեծացումը, սպառազինության նոր տեսակների արտադրությունը լրացուցիչ լիցք էին հաղորդում էրդողանական ագրեսիվությանը: Անկասկած, միջազգային համակարգի հնարավորություններն էական էին ագրեսիվ վարքագծի իրականացման հարցում, սակայն դրա սնուցող ու շարժիչ ուժերից մեկը նաև ռազմական կարողությունների մեծացումն ու վերջին տարիներին Թուրքիայի ձեռք բերած ինքնաբավության համեմատաբար մեծ աստիճանն է: Ռազմական կարողությունների մեծացման մեջ տեղական, ազգային ռազմարդյունաբերության կշիռը չափազանց մեծ է, քանի որ այն ոչ միայն մեծացնում է թուրքական «գոլիզմի» քաղաքականության հնարավորությունները, այլև թուրքական հասարակական-քաղաքական ընկալումներում թուլացնում «կիպրական էմբարգոյի»[17] սինդրոմի ազդեցությունը: Էրդողանը մի քանի անգամ շեշտել է, որ Թուրքիան այլևս կաշկանդված չէ միջազգային կամ արևմտյան զենքի էմբարգոների կիրառման հավանականությամբ և ի զորու է իր շահերի իրականացման հարցում վճռականորեն դիմել ռազմական ուժի կիրառմանը: 2020 թ. նոյեմբերին ելույթ ունենալով «Aselsan» ընկերության նոր գործարանի բացման արարողությանը՝ Էրդողանը շեշտել է, որ ԱԶԿ-ի կառավարման 18 տարիների ընթացքում «ռազմարդյունաբերության մեջ ամբողջովին անկախ Թուրքիայի» նպատակին հասնելու ուղղությամբ շարունակվել են աշխատանքները, և Թուրքիան այսօր դարձել է «ծածուկ ու բացահայտ կիրառվող էմբարգոները սեփական ուժերով հաղթահարող երկիր»[18]: Պաշտպանական արդ-

[16] Տե՛ս **Anouck Gabriela Côrte réal-Pinto**, A Neo-Liberal Exception? The Defence Industry 'Turkification' Project, International Development Policy 8, 2017:

[17] 1974 թ. Կիպրոսի հյուսիսային հատվածի անեքսիայից հետո ԱՄՆ-ն Թուրքիայի նկատմամբ կիրառեց զենքի էմբարգո, ինչը բացասական լուրջ ազդեցություն ունեցավ ռազմական ու քաղաքական իշխանությունների ընկալումների վրա: Դա ոչ միայն ռազմաքաղաքական իշխանության շրջանում ի ցույց դրեց Թուրքիայի ռազմատեխնիկական կախվածության մակարդակն ու խոցելիությունը, այլև առիթ դարձավ որոշակի ինքնաբավության ուղղությամբ նախնական քայլերի իրականացման համար:

[18] Cumhurbaşkanı Erdoğan: Türkiye ambargoları kendi gücüyle aşabilen bir ülke oldu,

յունաբերության գերատեսչության ղեկավար Ի. Դեմիրի խոսքերով՝ երկրի անկախության կարևորագույն հենասյուներից մեկը ռազմարդյունաբերության ոլորտում անկախության հասնելն է, ինչի միակ ճանապարհը տեղական, ազգային միջոցներով արտադրվող սպառազինության թվաքանակի ավելացումն է[19]: Տեղական ռազմարդյունաբերության զարգացման թվային ցուցանիշները բավական խոսուն են: 2020 թ. դրությամբ իրականացվող ռազմարդյունաբերական նախագծերի ընդհանուր թիվը կազմել է 762, իսկ նախագծերի պայմանագրային ծավալը՝ 55.8 մլրդ դոլար: Ռազմական արդյունաբերության և ավիացիոն արտադրանքի արտահանման ծավալը 2019 թ. գերազանցել է 3 մլրդ դոլարը[20]: Ռազմատեխնիկական ինքնաբավության ապահովման ուղղությամբ ևս հետևողական քաղաքականությունը շարունակվում է, ինչի վկայությունը ռազմարդյունաբերության մեջ տեղական-ազգային մասնաբաժնի էական մեծացումն է: Այսինքն՝ թուրքական զինված ուժերի ռազմատեխնիկական կարիքների ապահովման գործում տեղական մասնաբաժինը գնալով մեծանում է: Հատկանշական է հատկապես այն, որ 2016 թ. սկսած՝ տարածաշրջանային հակամարտություններում Թուրքիայի մասնակցությամբ ռազմագործողություններում կիրառվող սպառազինության մեջ մեծ թիվ են կազմում տեղական արտադրության զինատեսակները, որոնց կիրառումը կոնկրետ մարտական գործողություններում նաև փորձարկումների նպատակ է հետապնդում:

Ստոկհոլմի միջազգային խաղաղության ուսումնասիրությունների ինստիտուտի (*SIPRI*) տվյալներով՝ Թուրքիայի ռազմական ծախսերը վերջին տասնամյակում աճել են ավելի քան 86%-ով[21]: Պաշտպանական ծախսերը, որոնք էականորեն մեծ են պետական բյուջեի այլ ծախսային կետերից, 2020 թ. գերազանցել են 19 մլրդ դոլարը, որը կազմում է պետական բյուջեի ծախսային մասի մոտ 13%-ը: Եթե սրան հավելենք ռազմարդյունաբերական հայտնի ընկերություններին տրամադրվող պետական հատկացումները, ապա ընդհանուր պաշտպանական ոլորտի ծախսերը կկազմեն պետական բյուջեի մոտ 25%-ը[22]: Էրդողանի ձևակերպմամբ՝ Թուրքիան հասել է այնպիսի հզորության, որ ռազմական ուժերի ակտիվ աջակցությամբ կարող է ապահովել իր քաղաքական ու տնտեսական շահերի իրականացումը տարբեր հարթություն-

---

https://www.trthaber.com/haber/gundem/cumhurbaskani-erdogan-turkiye-ambargolari-kendi-gucuyle-asabilen-bir-ulke-oldu-530449.html.

[19] Տե՛ս Türkiye'nin silah ihracatı arttı ithalatı azaldı, https://www.trthaber.com/haber/ekonomi/turkiyenin-silah-ihracati-artti-ithalati-azaldi-564592.html

[20] 2002 թ. իրականացված նախագծերի թիվը կազմում էր 66, իսկ դրանց պայմանագրային ընդհանուր արժեքը՝ մոտ 5.5 մլրդ դոլար: Տե՛ս Türk savunma sanayiinin 2019 yılı performansı, https://www.ssb.gov.tr/Website/ContentList.aspx?PageID=48

[21] Տե՛ս Turkey's military spending jumps 86% over last decade, https://www.dailysabah.com/business/defense/turkeys-military-spending-jumps-86-over-last-decade

[22] Տե՛ս **Zulfikar Dogan**, The unspoken cost of Turkey’s ever-escalating military spending, https://ahvalnews.com/greece-turkey/unspoken-cost-turkeys-ever-escalating-military-spending

ներում[23]: Թուրքական ռազմարդյունաբերական համալիրի զարգացումը մեծացնում է ոչ միայն ուժային գործոնը ուղղակի կիրառելու, դաշնակից երկրներին զինելու և ռազմաքաղաքական իր դերը բարձրացնելու հնարավորությունները, այլև ապահովում է հովանավորյալ պրոքսի ուժերի ռազմատեխնիկական մատակարարման հուսալիությունը: Նշենք, որ միայն 2020 թ. սեպտեմբերին, երբ Արցախի դեմ սանձազերծվեց ադրբեջանական ագրեսիան, ռազմարդյունաբերական հատվածից ամենաշատ արտահանումն իրականացվել է Ադրբեջան՝ կազմելով ավելի քան 77 մլն դոլար[24]: Տեղական ռազմաարդյունաբերության զարգացումը, գրանցած ձեռքբերումները Թուրքիայի ռազմատենչ արտաքին ու տարածաշրջանային քաղաքականությունը սնուցող առանցքային գործոններն են՝ ապահովելով ռազմական մատակարարի նոր դերով հանդես գալու Թուրքիայի հավակնությունները:

Հավակնոտ ծավալապաշտություն և ագրեսիվ գերինքնավստահություն

2016 թ. հուլիսի 15-ը՝ ձախողված հեղաշրջման փորձի օրը, կարելի է համարել Թուրքիայի նորագույն պատմության հերթական շրջափուլի պայմանական մեկնակետ, որը որակական փոփոխությունների առիթ դարձավ այդ երկրի ներքին և արտաքին քաղաքական ուղեգծերի համար՝ Անկարային դարձնելով մերօրյա աշխարհի ամենախնդրահարույց և վտանգավոր դերակատարներից մեկը: Թուրքիային առանց չափազանցության կարելի է դիտարկել որպես միջազգային գործող իրավակարգը, միջազգային իրավունքի հիմնարար սկզբունքներն ու նորմերն ամենից հաճախ կոպտագույնս ոտնահարող երկիր:

Էրդողանի դեմ կազմակերպված հեղաշրջման փորձի տապալման իրողությունը թուրքական իշխանությունները բավականաչափ հմտորեն օգտագործեցին երկրի ներսում քաղաքական ընդդիմությանը ճնշելու, այլախոհությունը պատժելու, մարդու հիմնարար իրավունքներն ու ազատությունները սահմանափակելու առումով՝ առավել ամրապնդելով Էրդողանի և իշխող ԱԶԿ-ի միահեծան դիրքերը երկրի կառավարման համակարգում: Այս միտումն ամրագրվեց նաև իրավական առումով, երբ 2017 թ. սահմանադրական հանրաքվեով փոխվեց կառավարման ձևը՝ խորհրդարանականից անցնելով նախագահականի: Նման բարենպաստ իրավիճակում Էրդողանի վարչակարգը հակաահաբեկչական պայքարի քողի ներքո զանգվածային «որս» սկսեց տարատեսակ հակառակորդների դեմ միաժամանակ մի քանի ուղղություններով՝ նախկին գաղափարակից կրոնական գործիչ Ֆեթուլլահ Գյուլենի ձևավորած ցանցի՝ գյուլենական համայնքի (հեղաշրջման փորձից հետո իշ-

[23] Տե՛ս **Ayla Jean Yackley**, How Turkey militarized its foreign policy, https://www.politico.eu/article/how-turkey-militarized-foreign-policy-azerbaijan-diplomacy/

[24] Տե՛ս Sanayi ihracatında rakamlar açıklandı: Savunmada aslan payı Azerbaycan'ın, https://www.aksam.com.tr/teknoloji/sanayi-ihracatinda-rakamlar-aciklandi-savunmada-aslan-payi-azerbaycanin/haber-1116904

խանական քարոզչությամբ սկսեցին անվանել «Ֆեթուլլահական ահաբեկչական կազմակերպություն»՝ *FETÖ*), ուժային կառույցների, քրդական կազմակերպությունների ներկայացուցիչների դեմ:

Անհաջող հեղաշրջման փորձին հաջորդած շրջանում ձերբակալվել, ազատազրկվել են հազարավոր զինծառայողներ, քաղաքական գործիչներ, այլախոհներ, լրագրողներ, փակվել են տարաբնույթ կազմակերպություններ, ԶԼՄ-ներ և այլն: Դրան զուգահեռ՝ տնտեսական լրջագույն խնդիրների պատճառով մշտական դժգոհություններից սեփական հանրությանը շեղելու և հանրային մոբիլիզացիա ապահովելու նպատակով Էրդողանի վարչակարգն սկսեց վարել ավելի հավակնոտ, ագրեսիվ և ապակայունացնող քաղաքականություն հարակից գրեթե բոլոր տարածաշրջաններում՝ Մերձավոր Արևելքում, Հարավային Կովկասում, Արևելյան Միջերկրածովյան տարածաշրջանում: Թուրքիայի արտաքին ու անվտանգային քաղաքականության կերպափոխման մեջ առանցքային դարձան ռազմական ուժի վրա հիմնված միջամտությունների ու ծավալապաշտական հավակնությունների գործոնները: 2016 թ. ռազմական հեղաշրջման դեմ իշխանությունների և հանրության հաղթանակը, ներկայացվելով որպես երկրորդ ազատագրական պատերազմ, դառնալու էր «Նոր Թուրքիայի» սկզբնավորման հիմնակետը, այն Թուրքիայի, որը իշխանությունների տեսլականով պետք է վերականգնի օսմանյան կորուսյալ փառքը[25]: Չնայած միջազգային ու տարածաշրջանային համակարգում տեղաշարժերի կարևորությանը՝ Թուրքիայի արտաքին քաղաքականության վրա ներքին համակարգային գործոնների ազդեցությունը ևս առաջնային է, ինչպես օրինակ՝ քաղաքական համակարգում անձնիշխանության ուժեղացումը, գաղափարախոսական կողմնորոշիչները և այլն: Նման քաղաքականության իրացման համար բարենպաստ միջավայր էր ստեղծում նաև միջազգային իրադրությունը, որի բարձրակետը դարձավ 2020 թ.՝ պայմանավորված COVID-19 համավարակով ու համաշխարհային բնույթի նոր մարտահրավերով և ԱՄՆ-ում նախընտրական գործընթացներով ու դրանց վերջնարդյունքներով:

Վերոնշյալի համատեքստում առանձնահատուկ շեշտադրման են արժանի ԱՄՆ-ում Թրամփի գլխավորած վարչակազմի մերձավորարևելյան քաղաքականության առաջնահերթությունները, որոնց հիմքում դաշնակիցների հետ հարաբերություններն առնվազն չվնասելու միջոցով սեփական տնտեսական շահերի հետապնդումն էր, ինչպես նաև Իսրայել պետության անվտանգության առավել ամրապնդումը: Ընդ որում, Վաշինգտոնի նման քաղաքականությունը և նրա առանձին դրսևորումներն[26] սկզբունքային

[25] Տե՛ս **Hakkı Taş**, The 15 July abortive coup and post-truth politics in Turkey, Southeast European and Black Sea Studies, Vol. 18, № 1, 2018, էջ 12:

[26] Որպես օրինակ՝ Իրանի միջուկային համաձայնագրից Վաշինգտոնի միակողմանի դուրս գալը, Իրաքի, Սիրիայի քրդերի խնդիրները, ամբողջական Երուսաղեմն Իսրայելի մայրաքաղաք ճանաչելու և ԱՄՆ-ի դեսպանատունն այնտեղ տեղափոխելու, Գոլանի բարձունքների նկատմամբ Իսրայելի գերիշխանությունը ճանաչելու վերաբեր-

տարաձայնություններ էին առաջացրել ԱՄՆ-ԵՄ հարաբերություններում՝ պատճառ դառնալով տարածաշրջանային կարևոր գործընթացների վերաբերյալ Արևմուտքի միասնական դիրքորոշման բացակայության: Մյուս կողմից՝ Թուրքիա-Արևմուտք (բայց ոչ՝ Էրդողան-Թրամփ) հարաբերություններում ծագած լարվածությունից փորձում էր հնարավորինս օգտվել Ռուսաստանը՝ ինչպես երկկողմ բազմաշերտ օրակարգի մի շարք ոլորտներում խորացնելով հարաբերությունները, այնպես էլ հակամարտությունների տարբեր գոտիներում Անկարայի հետ համագործակցությամբ հասնելով որոշակի ստատուս քվոյի՝ փոխադարձ շահերի ճանաչմամբ: Նպատակը Թուրքիայի և Արևմուտքի կամ ՆԱՏՕ-ի հարաբերությունների վրա հնարավորինս բացասական առումով ներազդելն էր:

Ասվածի համատեքստում սեփական երկրի դերը լավագույնս գնահատում էր Էրդողանի վարչակարգը՝ շատ հաճախ սեփական խաղը խաղալով, սեփական շահերն առաջ մղելով և ինչպես դաշնակիցներին ու գործընկերներին, այնպես էլ հակառակորդներին փաստի առջև կանգնեցնելով («Մի գիշեր հանկարծակի կգանք»՝ ազգայնամոլական հայտնի արտահայտության տրամաբանության շրջանակում)[27]: Թուրքիայի նման գործելաոճի դրսևորումները պարբերաբար, մեկը մյուսին հաջորդելով, ապակայունացրել են տարաբնույթ հակամարտային գոտիներ: Հատկապես «Արաբական գարնան» գործընթացների շրջանակում իր ուժերի նկատմամբ նորահայտ ինքնավստահությամբ պայմանավորված՝ Թուրքիայի իշխանություններն ընտրեցին տարածաշրջանում ռազմական ներգրավման և կոշտ միջոցների քաղաքականությունը: ԱԶԿ-ի այն հավատամքը, թե այն արդեն ապահովագրված է ռազմական հեղաշրջումներից, աննախադեպ ինքնավստահություն հաղորդեց տարածաշրջանում ակտիվ ներգրավման քաղաքականություն իրականացնելու, որում ի ցույց էր դրվելու այդ տարածաշրջանում դաշնակիցների հարցում նախապատվությունները[28]: Անկարան այս քաղաքականությունը վարում էր հստակ մարտավարությամբ:

Թուրքիայի շահերի գոտի հանդիսացող որևէ տարածաշրջանային կամ ներպետական սառեցված, ակտիվացած կամ նոր ծագած հիմնախնդրում Թուրքիան իր միանշանակ, վճռորոշ և համակողմանի աջակցությունն էր առաջարկում հակամարտ կողմերից մեկին: Ստանալով գործելու հնարավորություն՝ առավելագույնս նպաստում էր իր հովանավորյալ դերակատարի դիրքերի բարելավմանը՝ զուգահեռաբար ապահովելով սեփական ռազմական, ռազմավարական, քաղաքական և տնտեսական ազդեցությունը հակամարտության տվյալ գոտում: Նշված

յալ որոշումները, Իսրայելի և արաբական մի շարք կարևոր երկրների միջև «Աբրահամյան համաձայնագրերի» ստորագրման միջնորդությունը և այլն:

[27] Տե՛ս Cumhurbaşkanı Erdoğan: Bir gece ansızın gelebiliriz, https://www.aa.com.tr/tr/gunun-basliklari/cumhurbaskani-erdogan-bir-gece-ansizin-gelebiliriz/1030766

[28] Տե՛ս **Sarah El-Kazaz**, The AKP and The Gulen: The End of a Historic Alliance, Middle East Brief, July 2015, № 94, էջ 8, http://www.brandeis.edu/crown/publications/meb/MEB94.pdf

սցենարների բնորոշող օրինակներ են Կատարի, սիրիական, լիբիական, պաղեստինա-իսրայելական, ԼՂ հակամարտությունները, որոնցում Անկարայի ներգրավումը որակական փոփոխություն մտցրեց ինչպես հակամարտությունների բովանդակության, այնպես էլ արտաքին այլ դերակատարների միջամտության հնարավորությունների հարցում: Մ. Ալթունըշըքը Թուրքիայի վերոնկարագրյալ գործելաոճը բնութագրել է հետևյալ կերպ. Մերձավոր Արևելքում (*այդ թվում՝ Հարավային Կովկասում-Լ. Հ.*) Անկարայի նոր արտաքին քաղաքականությանը բնորոշ են ռազմական լուծումների գնալու պատրաստակամության, ռիսկային գործողություններում ներգրավվելու և միայնակ գործելու բաղադրիչները[29]:

Թուրքիայի արտաքին քաղաքականության շրջանակներում հովանավորյալ դերակատարներին ցուցաբերվող աջակցությունը, կախված հակամարտության բնույթից, ենթադրում էր քայլերի հետևյալ հաջորդականությունը.

1. Ֆորմալ դերակատարների դեպքում (պետություն, կառավարություն) անհրաժեշտ երկկողմ իրավական բազայի ստեղծում՝ փոխօգնության պայմանագրի, աջակցության հայցի, ռազմական համագործակցության հուշագրի կամ այլ բնորոշ փաստաթղթի ստորագրման տեսքով և այլն: Ոչ ֆորմալների պարագայում՝ հակաահաբեկչական պայքարի կամ մարդասիրական իրավունքի նորմերի պաշտպանության հիմքով ռազմական միջամտության համար անհրաժեշտ միջավայրի արհեստականորեն ձևավորում:

2. Թուրքական զինված ուժերի, հատուկ ծառայությունների ներկայացուցիչներին, հետախուզության[30], ռազմական ոլորտի մասնագետներին կրթական, փորձի փոխանակման, անհրաժեշտության դեպ-

---

[29] Տե՛ս **Meliha Benli Altunışık**, The New Turn in Turkey's Foreign Policy in the Middle East: Regional and Domestic Insecurities, IAI Papers-20, 17 July 2020, էջ 9:

[30] Թուրքիայի ազգային հետախուզական կազմակերպությունը ԱԶԿ-ի կառավարման շրջանում և հատկապես 2016 թ. ռազմական հեղաշրջման փորձից հետո ենթարկվեց էական վերաձևումների, տրվեցին լայն լիազորություններ ներքին ու արտաքին հետախուզական գործունեության ոլորտում: Հատկապես արտաքին քաղաքականության որոշումների կայացման ու իրականացման հարցում այդ կառույցի ինստիտուցիոնալ դերակատարությունը էականորեն մեծացավ, երբ այն 2017 թ. դրվեց երկրի նախագահի անմիջական ենթակայության տակ: Արտաքին ու անվտանգային ոլորտում որոշումների կայացման արդի համակարգում, որը առավելապես դարձել է նեղ խմբային ու անձնակենտրոն, ԱՀԿ-ի տնօրեն Հ. Ֆիդանը, որը Էրդողանի ամենավստահելի մարդկանցից է, պաշտպանության նախարար Հ. Աքարի հետ միասին կարևոր դերակատարություն ունի: Թուրքիայի հատուկ ծառայությունները դարձել են ագրեսիվ արտաքին քաղաքականության իրականացման կարևորագույն գործիքներից՝ հետախուզությունից մինչև պրոքսի պատերազմներ: Սիրիայում, Լիբիայում, Իրաքում Թուրքիայի հովանավորության տակ գտնվող զինյալների, պրոքսի ուժերի հավաքագրման ու կառավարման, այսպես կոչված «ջիհադական մայրուղու» ստեղծման, ինչպես նաև 2020 թ. Ադրբեջան դրանց փոխադրման գործում այդ կառույցն ունեցել է առանցքային նշանակություն: Տե՛ս **Լ. Հովսեփյան**, Թուրքիայի ազգային հետախուզական կազմակերպության արդիականացումն ու արտաքին հետախուզության վերակազմակերպումն ԱԶԿ-ի կառավարման տարիներին, «Ժամանակակից Եվրասիա», համար 2 (1), 2013, էջ 51-64; **D. Phillips**, Turkey: A state sponsor of terrorism?, https://www.neweurope.eu/article/turkey-a-state-sponsor-of-terrorism/

քում նաև ռազմաբազայի ստեղծման պայմանավորվածության հիմքով ԶՈՒ ստորաբաժանումներ գործուղելու, սպառազինություն մատակարարելու և դրանց՝ զինված գործողություններին տարբեր հարթություններում ներգրավելու միջոցով:

3. Հատկապես Սիրիայի հյուսիսում հովանավորյալ մի շարք ընդդիմադիր խմբավորումների զինյալների, փախստականների ճամբարներից վարձկանների հավաքագրման և 500-2000 դոլար ամսական աշխատավարձով տարբեր հակամարտությունների գոտիներում ներգրավման եղանակով որպես «թնդանոթի միս» կամ հատուկ հանձնարարությունների իրականացման համար:

Ընդհանուր առմամբ, Թուրքիայի նման գործելաոճը գագաթնակետին հասավ 2019 թ. հոկտեմբերից 2020 թ. նոյեմբերն ընկած ժամանակահատվածում, երբ Անկարան հաջորդաբար նախաձեռնեց կամ մասնակցեց հիմնախնդրի ակտիվացման գործընթացների, ռազմական գործողությունների Սիրիայում, Լիբիայում, Արևելյան Միջերկրականում, Իրաքում, ԼՂ-ում՝ ձգտելով և, ըստ էության, նաև հնարավոր առավելագույն ձեռքբերումների հասնելով գրեթե բոլոր հակամարտային գոտիներում՝ իհարկե նաև ապակայունացնելով տարբեր տարածաշրջաններ, վտանգելով միջազգային խաղաղությունն ու անվտանգությունը, հանգեցնելով նաև մարդասիրական աղետի և, մեծ հաշվով, մնալով անպատիժ:

ЛЕВОН ОВСЕПЯН, АРМЕН ПЕТРОСЯН – ***Тенденции милитаризации внешней и региональной политики современной Турции.*** – Современная внешняя и региональная политика Турции характеризуется как милитаристкая и сверхсекьюритизированная, сопровождающаяся националистической и ирредентической риторикой, агрессивной инициативностью, направленной на пересмотр статус-кво в соседних регионах. В статье рассматривается и анализируется: стратегия Турции, основанная на применении военного потенциала в региональной политике, на военном вмешательстве в соседние страны и регионы, на прокси-войне; теоретические подходы к милитаризации и секьюритизации внешней и региональной политики; значимость внешних и внутренних факторов, влияющих на эти милитаристские подходы.

Ключевые слова: *Турция, ПСР, внешняя политика, региональный конфликт, милитаризация, секьюритизация, ревизионизм*

LEVON HOVSEPYAN, ARMEN PETROSYAN – ***The Trends of Militarization of the Foreign and Regional Policy of Modern Turkey.*** – The current foreign and regional policy of Turkey is characterized as militaristic and oversecuritized, which is accompanied by nationalistic and irredentist official rhetoric aimed at revising the status quo in the neighbouring regions. The article analyzes the intensive use of military power in regional policy, the strategy based on the military interventions and proxy wars in the neighbouring regions and countries. Theoretical and academic approaches on the militarization and securitization of the Turkish foreign and regional policy and the influence of external and domestic factors on it were also viewed.

Key words: *Turkey, AKP, foreign policy, regional conflict, militarization, securitization, revisionism*